ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի որոշմամբ հաստատված «Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/02»-ի՝ ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը հետևյալն է՝

Տոկոսագումարի ամսական վճարմամբ ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հնարավոր է հաշվարկել հետևյալ բանաձևով՝

$$APY = (1+r/n)^{n} - 1$$

Ո րտեղ՝

1. APY – Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունն է (Annual Percentage Yield)՝ ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը ավանդատուի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:
2. r – Տարեկան պարզ տոկոսադրույքն է (Annual Rate of Simple Interest)՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքն է, որի հիման վրա բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:
3. n – Մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Տոկոսագումարի ժամկետի վերջում (կամ այլ պարբերականությամբ) վճարմամբ ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հնարավոր է հաշվարկել՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$A= \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+APY)^{\frac{Dn}{365}}}$$

որտեղ՝

1. A - ավանդի սկզբնական գումարն է:
2. n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:
3. N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
4. Kn - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
5. Dn – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D1 = 0:

Տոկոսագումարի ժամկետի վերջում վճարմամբ ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկելիս՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից ավանդի ժամկետի համար հիմք է ընդունվել ներգրավման ժամկետի յուրաքանչյուր միջակայքի առավելագույն արժեքը, իսկ «Մանկական» ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկելիս՝ ավանդի ժամկետի համար հիմք է ընդունվել 365 օրը: